

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

(Շար. տես Բազմ. 1953, Թ. 8-10, էջ 164)

ՀՈԳԵԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԻ ԵՐԳԵՐ.

«ԱՆԳԵՂՆ ԵՐԳ» ԵՒ «ՆԻՐՎԱՆԱ» ՔԵՐԹՈՒՄՆԵՐԸ:

Սիրային ու բնութեան երգերուն մէջ
ցան ու թախիծը անպակաս էր արդէն:

Տրտմութիւնը Եղիայի հոգւոյն ծաղիկն
է, թունաւոր ծաղիկը: Ատկէ են իր մե-
կուսացումի բոլոր ձկտումները, որոնք
պիտի վերջանան հալածանքի խելագարու-
թեամբ: Անոր ծանօթները, բարեկամնե-
րը, ընտանեկան պարագաները, դուրդու-
րոտ մայրը՝ միշտ դիտած են իր մէջ այդ
ահաւոր տրտմութիւնը:

«Տրտմութիւնն ես Եղիա», «Բիւ մը դը-
ւարթ եղիւ Եղիա». կը հնչեն իր ականջին
այս դիտողութիւնները ուղղուած իրեն:
Իր հոգւոյն բնական բերումն է այդ տըխ-
րութիւնը, աւելի ուղիղ՝ ընկնող մեղա-
մաղձութիւնը:

1884-ին արդէն կը նշմարուի իր բանա-
ստեղծութեան մէջ այդ երակը, որ հետ-
զհետէ դեռ աւելի պիտի զարգանայ ու
լայննայ: Ան կը տեսնէ ամէնուրեք ցաւ,
տառապանք, թշուառութիւն ու լաց: Եր-
բեք բնութիւնը, սիրոյ վայելքը չեն տար
զուարթութեան նշոյլ մը իր աչքերուն եւ
հոգւոյն խորը, այլ ընդհակառակն վիշտը
կը սողայ իր մտածութեանց, զգացումնե-
րու շրջապատէն ներս եւ կը դառնացնէ ա-
մէն ինչ:

Սիրային երգ մը, օրինակի համար,
(Նեկտար եւ արտասուք. Գր. եւ իմաստ.
Շարժ. 1884. 38) կը վերջանայ սա տո-
ղերով.

«Եւ սրտաբեկ
Տուն դարձայ հեղ.
Իրմպեմ արտասուք,
Նեկտարի տեղ.
— Չե՞ն նոյն հեղուկ »:

Եղիայի փիլիսոփայութեան մէջ ամէն
ինչ նիւթ է եւ ամէն ինչ կը վերադառնայ
հոսակ նիւթին (այս մասին պիտի խօսինք
աւելի ուշ). նեկտար, արցունք, սէր ու
ցաւ, ծիծաղ ու լաց մէկ են ըստ իրեն:
Այս ահաւոր անտարբերութիւնը եւ յոռե-
տես փիլիսոփայութիւնը հիմը կը կազմէ
իր հոգեկան տառապանքը արձանագրող
բանաստեղծութեան:

Նորածինի մը երջանիկ ծնունդը երգած
ատեն կը տեսնէ անոր անմեղունակ լացին
մէջ ցան ու ապաղայ դժբախտութիւնը՝
դարանած անոր կեանքին դէմ. ու այդ
դժբախտ էակին մէջ կը դռնէ քոյրը իր
հոգւոյն.

«Մէն մի լացի՝ մի նուէր, համբոյր՝
մէն մի ժպտի,
Պիտ՝ ընծայուի մանկանդ. այլ ե՞ս
հաւաստի

Թէ յիւր ծոցին չըբունի բան
մը թաքուն,

Որ նախ կոչուի սէ՛ր, ապա
դժբախտութիւն:

Այլ... երբ դըստրիկդ ըլլայ դժբախտ,
հաւատա՛,

Պիտի հրճուիմ, զի քոյրն հոգւոյս
պիտ՝ ըլլա(1).

Դժբախտ հոգին խոտէ պերճանք,

չուք ու զարդ,

Բանաստեղծին համեստ ժպտի,

ձօնէ վարդ...»:

(Գր. եւ իմաստ. Շարժ. 1884. 97)

Յատկանշական է իր Սէրք իմ (անդ.
1884. 158) քերթուածը, նուիրուած Ալի-
շանին: Ան կը սիրէ ինչ որ մթին, ինչ որ
թախճոտ է, եւ ինչ որ սուգ ունի իր մէջ.
Կը սիրէ սեւը, տխուրը, ահաւորը եւ սար-
սափեկին.

«Ես ի ծաղկունս սիրեմ ո՛չ վարդն,
այլ զմեկտն.

Ո՛չ մրտենին դալար ի ծառս,
այլ նոճին.

ԶԱնակրէոն ոչ ի քերթողս,
այլ զՄիլտոն.

Եւ յըմպելիս ոչ զօշարակն,
այլ զընդի՛ն »:

Եղիայի ճակատը իր 33-րդ տարեկան
հասակին մէջ՝ հակած է արդէն գերեզ-
մանութիւններուն.

«Ես զայն սիրեմ, ըզբընարանն
այն խաղաղ.

Ըզլըռութիւն, զեղիճ, ըզվէմ,
վիմեայ զգիրք.

Սիրեմ զաշխարհն այն անաշխար,
՛ւ ոչ անտաղ -

Շիրմաց վրայէն անցնին թռչունք
եւ ոգիք.

Զեմ անդանօր անոքիկ...:

(1) Յանգի կատարելութեան համար ըլլալ-ի
վերջածայր յ գիրը գեղչած է դիտումնաւոր կեր-
պով:

* * *

Այս տրտմութիւնը խորացած է արդէն
իր Անգեղն Երգ-ին մէջ (անդ. 1884. 204)
որ Եղիայի տարաբախտ հոգին կը բանայ
մեղի: 1884-ին գրուած այս սեւաթուղթ է-
ջերը՝ 1874-ին (տասը տարի առաջ) զգաց-
ուած ահաւոր վայրկեանի մը արձագանգն
են, այնքան ողբերգական՝ որ տարիներով
չարունակած են հնչել իր հոգւոյն մօտայ
տաճարին մէջ, միշտ թարմ եւ միշտ ներ-
կայ: Անձնասպանութեան փորձին թողած
յիշատակը ամէն իրիկուն, ամէն գիշեր կը
կրկնուի՝ որպէս թէ ըլլար անփոփոխ շա-
րունակութիւնը նոյն այդ եղբրական իրիկ-
ունն: Ու ինքը միշտ կենդանի մեռածն է
որ կը բողբոջէ, որ կու լայ մահուան դէմ,
անողոր ճակատագրին դէմ եւ մանաւանդ
իր եսին դէմ, միշտ դառնացած եւ միշտ
յուսակտուր: Ահա այդ նշանակալից քերթ-
ուածին ամէնէն բացատրական տունները.

Սեւ մեծ թռչուն մը, սեւ ամպի
մը նըման,

Մեծ սեւահեր գլխոյս վերեւ
միշտ դայ ման:

Է՞ս պահապան իմ նա հրեշտակ.
այլ սե՛ւ է:

Զերդ սեա՛ւ գիշեր, զերդ սեաւ գեհեն,
նա սե՛ւ է:

Սոսկալտեսիլ սեւ թռչուն մ՛է
լայնաթեւ,

Կըտուցն երկայն, եւ չարաչուք
որպէս դեւ.

Մարմնոյս վըրայ, մարմնոյս շուրջն յար
թեւածէ:

Հիւժեակն իմ անձ - ասեմ - արդեօք
մեռած է:

Եւ ինձ թըւի թէ կամ առ եղրն
անդունդի՛ն,

Եւ թէ դըժխեմ հաւն հոտոտէ
զցուրտն իմ դին.

Ինձ, ա՛հ, թուի թէ՛ սեւ թռչնոյն հետ
վիճին պայք.
«Ի բաց» դռնէալ. «Մարմնոյդ՝ մեր ծոցն
է հուսկ կայք»:

Այլ է հրգօր, անաղորոյն,
անողորք,
Սեւ մեծ թռչունն. ի դո՛ւր աղերսք
կամ բողոք.

Իր թեւոց տակ մահահամբոյր,
սեւաւ, անհո՛ւն,

Կամ. տասն ամ է՝ հնչեց ժամն յամբ
իմ մահուն: —

Տասը տարի է ուրեմն որ ան արդէն մե-
ռած է, մեռած իր հոգիին մէջ: Այդ «չա-
րաչուք սեւ թռչունը»՝ որ իր լայնատա-
րած թեւերով կը խափանէ լոյսը բնու-
թեան ու երկնքի ճառագայթումներուն, եւ
ստուերներու մէջ կը թափառեցնէ միտքն
ու երեւակայութիւնը, որ վը բաժնէ զինքը
կեանքէն, սէրէն, եւ իր ականջին տակ շան
մը պէս կը կաղկանձէ, եւ իր սուր մազիլ-
ները վը միտէ կուրծքին մէջ դաշոյնի մը
նման՝ սպաննելով հոգւոյն բոլոր աղնը-
ւական ձկտումները եւ կայծերը՝ նիւթն
է, աւելի ճիշտ՝ նիւթին վարդապետու-
թիւնը, որ իբր իմաստասիրական դրու-
թիւն շատ կանուխէն շեղեց զինքը ուղիղ
դէպն ու ճշմարիտ կեանքէն: Անմահու-
թեան դաղափարին տեղ եկաւ ան տիրա-
պետելու հոն իր ոչնչի սարսուռներովը,
քանդեց հոն դաղափարային գեղեցկու-
թիւնը, հոգեկան տեսիլքները եւ հրճ-
ուանքները:

Քերթուածին յաջորդ տունները պատ-
մականը կ'ընեն իր կրած այս ահաւոր յե-
ղաշրջումին.

Պայծառ գիշեր մ'էր... Մօտայի
ժայռին վրայ,

Տասն ամ յառաջ, յանլո՛ւր մարտի,
վա՛հ, կորա՛յ:

Յիս էր ոտիս. նա կոչուէր Նիւթ,
այլ խօսէր.
Աղաղակէր. «Ունա՛յն եւ կեանք,
փառք եւ սէր»:

Դեռահասակ ու սիրավառ,
յուսավիր,
Ոգորեցայ թշնամւոյն դէմ.

«Օ՛ն, ելի՛ր,
Հոգիդ իմ, դեւն հալածէ,
յաղթանակէ՛ (2).

Ձայնեցի. Ձո՛ւր. Իմացայ թէ
դատարկ է...:

Եւ նիւթն յայնժամ դարեւս եւ զարս
ետ ընդ ետ

Ցոյց ինձ տըւեալ, աղաղակե՛ց.
Ես եմ պետ.

Տիեզերաց ես յաւիտեան
իշխեմ միայն.

Եւ ի խորոց ալեաց լըւայ
քաղցրիկ ձայն...:

Նիւթ, Նիրվանա, կորուսին զիս
այն գիշեր.

Նընջէ՛ր Աստուած, եւ էր հոգեակս
ալ մաշէ՛ր.

Լուսնին վրայ սեւ տեսայ բիծ փոքր,
անսովոր,

Որ մեծացաւ, ինձ մօտեցաւ,
ահաւո՛ր:

Մեռած էի՛: Գիշակեր անդըն
էր այն բիծ,

Որ երկնայած այն դիակէն՝
լուսնէն՝ ինձ

Եկաւ, գըղուեալ ու հոտոտեալ
ու լիզեալ

Ըզծոցն իմ մերկ, ուր կա՛յր Յիսուս
խաչելեալ...:

(2) Այս տողին մէջ անուշադրութեան հետեւան-
քով հատուածի սխալ մը կայ, ուր անշուշտ յանդի-
համար զոհուած է ոտքին պահանջը:

Եղերական այն սեւաւ հաւուն
թեւոց տակ

Շըրջիմ յերկրի. նա՛ պահապանն
իմ հրեշտակ.

Ո՛չ եւս կուրծքիս վրայ խաչ, կուրծքիս
ալ ետեւ

Ձի՛ք սուրբ հաւատք. Ես դիակ մ'եմ
մըլտատեւ:

Լուսնին նըման, — հայի՛մ, հիւծի՛մ
թէ մեծնա՛մ, —

Միշտ դիակ մ'եմ. ընդ սեա՛ւ թեւօքն
յար զընամ.

Անդեղ միս տամ, թէեւ մանկանց
ալ դասեր.

Եւ սարսու՛ր միշտ, յորժամ լըսեմ
ըզձայն «Մէ՛ր»:

Այս տունները, — որոնց մէջ կան դրական
պատկերներ, փոխաբերութիւններ, ինչ-
պէս լուսնին նմանութիւնը իբր դիակի
(մարած մոլորակ), — կու տան մեզի բա-
ցատրութիւնը՝ թէ ինչպէս գիշեր մը,
Մօտայի անձնասպանութեան փորձին այն
ահուելի գիշերը, Եղիայի հոգին նուաճ-
ուած նիւթին մօտայ վարդապետութեան
տակ, դարձաւ դիակ մը՝ զուրկ կեանքէ,
սէրէ, հոգեկան ապրումներէ, դաղափա-
րականէ. զուրկ մանաւանդ հաւատքէ, ու
տառապեցաւ հիւծած, ամէն օր աւելի
զգալով զօրանալը իր մէջ այդ սոսկատե-
սիլ թռչունին տիրապետութեան, քանի որ
միշտ միս կու տայ անդին, այսինքն միշտ
կը մնայ յարած նիւթին եւ նիւթապաշտ
փիլիսոփայութեան:

Դժգոհ է սակայն Եղիա ինքնիրմէն: Կը
ցանկայ ձերբազատուել նիւթէն, բայց
ի՞նչպէս: Այդ բանը դարձած է այլեւս
անկարելի: Եւ ատկէ է ահա որ կը ծնանի
իր ահաւոր հոգետանջանքը: Տեսէ՛ք սա
վերջին երկու տուններն ալ, ուր բանա-
ստեղծը կը բողոքէ, կ'աղաղակէ իր թըշ-
նամին՝ նիւթին դէմ, զոր գիշակեր անդ-

զի մը պատկերին տակ կը ներկայացնէ
մեզի իր ուժեղ երեւակայութիւնը:

Այս անդամանելի ահաւոր ցաւը՝ կ'ա-
ռաջնորդէ զինքը մահուան տենչանքին,
իբր փրկութեան միջոց իր տառապանքէն.

Ձիս սեւ թռչունն այն գիշատէ
կենդանոյն:

Փրկեցէ՛ք զիս. չեմ դիմանար
այս ցաւոյն:

Ա՛հ, չեմ մեռեալ լիովին... զի...
սիրե՛մ դեռ.

Ձե՛մ ես դիակ. ո՛չ. զի... կոչեն
բնաւք զիս Նե՛ո:

Ա՛հ, սեւ թռչուն. տասնեակ ամ է.
ալ չէ՞ բաւ.

Մարմինս, աւա՛ղ, լափուելով յար՝
չըհատա՞ւ:

Ա՛հ, սեւ թռչուն. ա՛հ, սեւ երկին,
սե՛ւ երկիր,

Ալ բա՛ւ է. ժամ է որ լինիմ
ափ մը կիր:

Տարի մը վերջ կը մշակէ նոյն նիւթը
«Անդեղ երգ» խորագրով դարձեալ (անդ,
1885. 85), նախորդած այս անգամ Ռե-
թէոս Պէրպէրեանին, եւ իբր ի պատաս-
խան անոր յորդորանքին՝ գրկելու ողջա-
միտ փիլիսոփայութիւնը կեանքին: Եղիա,
հակառակ բոլոր թելադրանքներուն, կը
շարունակէ մնալ յարած նիւթին վարդա-
պետութեան, կրկնելով մահուան ու դիա-
կի իր պաշտամունքը: Սոխակը կը սիրէ
դալարապէս ու ոստախիտ անտառակը,
թիթեռնիկն ու մեղուն կը սիրեն ծաղիկը,
մարդը կը փնտռէ հաճոյքն ու վայելքը.

«Իսկ ես սիրե՛մ դամայի
ծովափն ուր կայ ցուրտ դիակ»:

Եւ դեռ աւելի անբնական ձեւով կը մե-
ղանչէ ողջմտութեան դէմ՝ երբ կը գրէ
հոն.

«Ո՛հ, դիակաց սիրեմ բոյրն,
եւ մանաւանդ տօթ յամառ»:

Ամառնային տօթին, դիակներու դար-
չահոտութիւնը բոյր մըն է իրեն համար,
որ կը սիրէ շիրիմներու շուրջը յածիլ,
ապրիլ եւ շնչել մեռելներու հետ, նոճիկնե-
րուն ընկեր ըլլալ, ունկնդրել գեղերային
մոայլ լուսութիւնները, հրճուիլ ի տես փայ-
լակներու՝ որ կը պատուեն երկնքի երեսը,
լսել շանթերու որոտը, եւ տեսնել բոցա-
փառ հրդեհումներ: Վերջապէս, ինչ որ
սարսափելի է, ինչ որ կը ցնցէ բնականոն
մարդը: Այս քերթուածին մէջ՝ ցաւը,
տրտմութիւնը, ահաւորի զգայնութիւնը
կը տանի բանաստեղծը անմարդկայինին,
եւ յանդուգն արտայայտութեան մը՝ որ
ներելի չէ.

«Թերեւս Աստուած իսկ է սեա՛ւ,
երկնից անտեսն այն բընակ,
Որ իբր օրէնք եղ ըզմահ,
եւ դիշակէ՛ր ստեղծ թռչուն»:

Նիւթին վարդապետութիւնը առաջնոր-
դեց աշպէս զինքը ուրանալու գերբնա-
կանը. «բան»-ը ջնջեց իր մէջ վրօնքի,
հաւատքի կեանքը: Է՞ր սպաննցիր երգը
(անդ, 1885. 125) վերջին տան մէջ յայտ-
նապէս կը չեղտէ զայն.

«Նոր մարդոյն երգն է այն. —
Բանն ըսպան ըզհաւատ.
Եւ հոգին յաւիտեան
Անիծէ՛, հեծէ աստ»:

Հոգեղէն արժէքներու եւ անմահութեան
հերքումը, եւ «Ոչինչ»ի վարդապետու-
թիւնը պաշտօնապէս կը դառնան իր դա-
ւանանքը, երբ Նիրվանայի ծոցին մէջ կ'ե-
րազէ հոսակ վերջնական անէացումը եւ վե-
րադարձը դէպի հանդիստը: Ըսենք սակայն
իսկոյն, որ Եղիա իր անդիտակից ծարա-
ւով դառնալու ծոցը ոչնչին, կ'իյնայ յա-
ւիտեանակա միութիւն ու յեղաշրջումի վար-
դապետութեան մէջ, առանց խորթա-
փանց կերպով հասկնալու Նիրվանայի
խորհուրդին էութիւնը:

* * *

Անգեղն երգ-էն վերջ՝ Նիրվանա քերթ-
ուածը (Ներկրագունտ. 1886. 329) կու գայ
ամբողջացնելու Եղիայի հոգւոյն տառա-
պանքը: Գրուած է ի պատասխան Յով-
հանէս Սեթեան բանաստեղծին՝ որ կը
հարցնէր իրեն. «Ընդէ՞ր մեծ տրտմու-
թիւնն ես Եղիա»:

Տրտում է Եղիա, վասնզի իր միտքը կը
փնտռէ ճշմարտութիւնը ու չի կրնար գտ-
նել զայն, վասնզի իր միտքը նիւթի պա-
րունակէն դուրս իր կատարած թռիչքնե-
րուն վստահութիւնը չունի, վասնզի հոգին
ցնցուած է ի տես անարդարութիւններու,
աղէտներու եւ թշուառութիւններու՝ որ
կը հարուածեն մարդկութիւնը: Մնալով
կարծես իր խորքին մէջ հաւատացեալ մը,
Եղիա մտքի պայքար կը մղէ հոս, փրկու-
թեամբ լուծումը առեղծուածին՝ թէ ինչո՞ւ
մարդը, թէ ի՞նչ է իր նպատակը, թէ ինչո՞ւ
հոգին տիրապետութիւնը՝ ուր հոսակ կ'եր-
թայ տարրալուծուիլ գեղեցիկ կազմուած-
քը կոյսին, մարդ էակին, արարչութեան
չքնաղ ձեռակերտին: Իր միտքը կը տան-
ջուրի դարձեալ ամլութեան դիմաց հոգե-
կան տենչանքներու, որ չեն գտներ իրենց
լիութի յաղեցումը, եւ երազին ու դադա-
փարին կը յաջորդէ խորտակում, քայքա-
յում եւ հանրական վշտակրութիւն:

Քրիստոսի հոգեպաշտ վարդապետու-
թիւնը ընկճող տատամբութիւններ վը ծը-
նանի մտքին մէջ Եղիային՝ որ կը դարձնէ
իր աչքերը հնդիկ պուտոտայականութեան,
հոն որոնելու հարցին լուծումը:

Բանաստեղծը կ'աղաղակէ տրտմօրէն.

Գիշերախառն յանձնմ ի ձա՛յն
քո, Սեթեա՛ն,
Նըսեմաստուեր ի խըցիկիս
չիք այլ ոք,
Բայց յըստուերէս, բայց յըստուերէն
թաղծութեան:
Իսկ ո՞ւր ես դու, ցայգուց երգիչ,
Մասեաց մոգ,

Թերեւս ի քուն, յերազս հեշտին
կամ ահեղ.

Թերեւս արթուն, դէտակն ոգւոց
կամ աստեղ:

Յինչէն հեռի, բայց կեաս դու յիս,
բարբառի՛ս.

Հարց առնես ինձ կեղերջականն
այն ձայնիւ,

Որով յուզես — թերեւս ըզժայռս —
յար զհոգիս,

Հարց առնես ինձ գորովանօք
եւ ահիւ,

«Ընդէ՞ր արդեօք մեծ տրտմութիւնն
ես, Եղիա՛»

Եւ զամս յիշես, զամս առաջին,
ուր տըղա՛յ...

Ու կ'ընէ յաջորդաբար պատմական իր
մանկութեան երջանիկ օրերուն, երբ մտքի
պայքարը չէր տանջեր զինքը: Չ'ուշանար
սակայն ցաւի ուժգին հարուածը՝ երբ տա-
րակոյսը կ'արթնայ իր մէջ: Իր երէց պա-
պուն լուսեղէն ճակտին մտահոգութիւնը,
սիրայորդոր շրթունքները եւ հոգւոյն ա-
ղօթքն ու իղձերը՝ որ մանուկը կըթուի
քրիստոնէական սուրբ հաւատքի ճառա-
դարձումներուն տակ՝ կ'ըլլան ընդունայն,
ու Եղիա կը մատնուի հոգետանջի ճի-
րաններուն: Կը յիշէ որ օր մը իր այդ
բանական պապը ըսած է իր մօրը՝ թէ
սրբական պապը ըսած է իր մօրը՝ թէ
տղուդ հոգւոյն մէջ «Աստուած տեսած
չեմ. բայց սատանն ա՛հ ա՛ս է»: Հետըդ-
հետէ հասակն առնելուն՝ կը զգայ որ աշ-
նանային տերեւներու դոյնը կ'առնէր իր
դէմքը. ու կը հարցնէ ինքնիրեն բանա-
ստեղծը.

«Դեղնութիւնն այն ուստի՞ դայր ինձ...:
Յիմ սրտին

Բունէ՞ր արդեօք որդ մը, մաշիչ,
մահատու...:

Ընկճի մերթ, եւ դողայի
զերդ բարտին,

Մերթ ինձ թըւէ՛ր թէ՛ դաշոյն մը
լա՛յն, հատու,

Գլխոյս վերեւ կը շողայր. ի դող
երթայի,
Ի թուխ ի սեաւ, տօսախս ի խիտ
թաքէի՛...»:

Պատանիի այն հոգեկան վիշտը կը
սաստկանայ եւ Եղիա կը դիմէ գրքերու,
խմաստասէրներու, հին ու նոր խորհոյնե-
րու. բայց լուսութիւնը միայն կը գտնէ ի
ի պատասխան իր հարցերուն: Յոբը, վշտի
այդ մարդը, որ Կ'անիծէ իր ծննդեան օ-
րը, կարծես պահ մը կը հանդէսեցնէ իր
տառապող միտքը՝ երբ կը կարծէ անոր
ինչ ինչ բացատրութիւններուն մէջ գտած
ըլլալ մարդուն վախճանին լուծումը.

«Եւ պաշտեցի, պաշտեմ ըզՅոբ
զանիծող,

Որ ինձ ուսոյց թէ բնաւից է
վախճանն հող»:

Նիւթին մէջ հոսակ յանդուր իր ձկտու-
մին դոհացում մը տալ կը թուին Յոբին
յոռետես արտայայտութիւնները: Բայց
տակաւին հանգիստ չէ բանաստեղծի հո-
գին: Քրիստոսի ձայնը, համաշխարհային
եղբայրութեան եւ սիրոյ քարոզը պահ մը
կը հրապուրեն զինքը, կը լուսաւորուի հո-
գին: Բայց Գողգոթայի ահաւոր պատկե-
րին, խաչեալ Յիսուսի մը անթափանցելի
խորհուրդին առջեւ սահմուկած, Եղիա վե-
րստին կը վրդովի եւ կը փնտռէ ուրիշ
եղք, ուրիշ միջոց՝ մտքին տաղնապները
ելք, լուծելու: Ու կը բռնէ Հնդկաստանի ճամ-
բան. կը գտնէ Սիտտարթան, Սաքիա —
Մունի քուրմը, եւ Պուտտան դիտունը:
Սաքիա-Մունի (Սաքիայի ցեղին անապա-
տականը), Պուտտա (դիտունը) ինքն Սիտ-
տարթան է, արեւի որդիներուն ցեղէն, որ
կը դրաւ հոգին Եղիայի: Սիտտարթան ալ
տրտում է, բայց չի՛ դիտեր թէ ինչո՞ւ
տրտում է, եւ ուսկի՞ց է իր ահաւոր
տրտմութիւնը, հակառակ ամէն վայելքի,
տրտմութիւնը, հակառակ ամէն վայելքի,
ամէն փառքի ու իշխանութեան, եւ հակա-
ռակ հրաշապեղ Եղիայի ծոցին տը-

ւած երջանկութեանը: Տրտում է Սաքիա-Մուշին, որովհետեւ ինքն ալ չի կրնար հասկնալ թէ ցաւն ի՞նչ աղբիւրէ կու գայ եւ թէ ի՞նչ պիտի ըլլայ մարդը: Ու օր մը, երբ նստած մեծ թղենիի մը տակ կը խորհէր, եղբակացուց. «Մահը կեանքէն կու գայ, կեանքը ծնունդէն, ծնունդը տենչանքէն: Եթէ մարդը կարենայ իր մէջէն ջնջել տենչանքը՝ երջանիկ պիտի ըլլայ: Կարծեց դուք ըլլալ սիրկութեան ճամբան, որ պիտի առաջնորդէր զերագոյն խաղաղութեան, Նիրվանայի քաղաքը: Այս ճամբան, ըսաւ, պիտի սորվեցնեմ մարդե-րուն»:

Եղիա հմայուած Սաքիա-Մուշիի այս երազային վարդապետութենէն, առանց դուցէ խորը մտնելու այն հակասութեան որ այդ արտայայտութեան մէջ թաքուն կը ծիծաղի մարդոց երեսին, սիրահարուեցաւ Նիրվանայի գաղափարին, ու դարձաւ երգիչը Պուտտայի: «Նիրվանա» անգլա-ցումն է տենչանքներու՝ ըմբռնուած որպէս ակերը մարդկային աղէտին, մարդկային սրտին թշուառութեան: Բնաջնջել տենչանքը մարդկային հոգիէն, պիտի նըշանակէր, սակայն, դադրեցումը կեանքին եւ նախընտրութիւն մահուան՝ կեանքէն:

Բայց արտակերպ Ներվանայի համար այս գաղափարը դիւթանք մ'ունի. մահը պիտի տայ վերջ կեանքին, եւ անով՝ տառապանքին: Հակամարդկային այս ձկտումին մէջ է ահա պատճառը անբացատրելի տրտմու-թեան Ներվանայի հոգւոյն. « ուղեւ եւ չուղեւ », « ապրիւ եւ չապրիւ », հակասական կնճիռ մը, որ ուրիշ բան չէ, բայց եթէ պայքար բանականութեան եւ խելագար զգայնութիւններու, որոնց զոհ է տարաբախտ բանաստեղծը:

Մահը, սակայն, ըստ հարադատ վարդապետութեան Պուտտայի՝ չէ այն երջանիկ անէացումը, դադարումով ցաւին, քանի որ մահով՝ ապրող էակը կը դառնայ մտնելու յաւիտենական նիւթին յեղաշրջու-

մին մէջ, անթարկուած վերստին աշխարհ դալու օրէնքին, այլապէս քան ինչ որ էր, մինչեւ որ հասնի դերագոյն կատարելու-թեան, ու ըլլայ արժանի Պուտտայի բարձրութեան, յետ մաքրագործութեան իր տը-կարութիւններէն: Մահ, եւ վերածնունդ շարունակ կը յաջորդեն իրարու նիւթի յաւիտենական յեղաշրջումին մէջ, եւ Ներ-վանայի կատարեալ երանութիւնը պիտի ըլլայ ամէնէն վերջ վարձատրութիւնը պայքարին, տառապանքին, մաքրագոր-ծումին:

Եղիա մահուան ցանկալով՝ լուծած չէր ըլլար այսպէս իր հոգեկան կնճիռը, քանի որ Սաքիա-Մուշիի դրութեան համաձայն պիտի վերածնանէր, եւ պիտի վերսկսէր պանդխտութեան շրջանը, մինչեւ որ ար-ժանանար անէութեան՝ ուր այլեւս չկայ վերածնունդ, կեանք եւ տանջանք: Սաքիա - Մուշի (Պուտտա) միայն այդ դերագոյն Նիրվանայի ծոցն է, դերագոյն հանգստին մէջ՝ որ անսկիզբ բնակարանն է, եւ յաղ-թանակը ժամանակին ու միջոցին վրայ:

Երկար քերթուածը կը վերջանայ այս-պէս.

Ես զա՛յն ցանկամ, զանէացումն
իմ Եսին,

Յանյատակ ծոց տիեզերաց

անպարոյր.

Յանկամ զհանգիստ ի ջուրս ի սուրբ

Գանդէսին, -

Գանկն իմ լիցի՛ թաղար ծաղկին

սրբաբոյր.

Զիմ էութեան զվախճան ցանկամ,

ի՛մս Օհան,

Զոչընչութիւնն անդիւտ, անճա՛ռ,

անվախճա՛ն:

Զըքնաղաղեղ Եաղօտարայ

գիրդն ի գոգ,

Արքայազուն, հրաշածընունդ

Սիտտարթան

Նընջէր արբշիռ սիրով, երգօք
ու խընկօք.

Զարթնու ընդոստ, տրտում ընդ միշտ,
յողւո՛ց հան.

Եաղօտարան, արեգածին

չքնաղ կին,

Եհարց ցընա. «Զի՞նչ պակասի
իշխանին»:

Պատասխանի Սիտտարթան ետ.

«Զըգիտե՛մ»:

Գիշերախառն, Յովհան, ի ձայնդ
յարուցեալ,

Յըմահ տրտում, պատասխան տամ.

«Զըգիտե՛մ».

Հարցման՝ դոր ինձ ուղղես ի խոր
դու յուզեալ՝

«Ընդէ՛ր արդեօք մեծ տրտմութիւնն
ես, Եղիա»:

Գիտութիւնս է, տենչս է միակ —
Նիրվանա...:

Շատ յայտնի է թէ՛ զուրկ է բոլորովին փիլիսոփայական հիմէ՝ այս բանագո-ւ-շանքը, որուն խելագարօրէն յարած է Ե-ղիա: Մենք արդէն մեր նախընթաց էջե-րուն մէջ՝ հոն ուր խօսած ենք Նիրվանա-յի խորհուրդին վրայ, պարզած ենք այս կէտը. հետեւաբար աւելորդ է հոս այլեւս երկարել այս մասին՝ քերթուածին բացա-տրութեան առիթով:

Նիրվանա քերթուածը մտածութեան մը արդիւնք է, եւ իբր գաղափար կամ խորք՝ մեկնութիւնն է իր կոյր յարումին հնդկա-կան կրօնական փիլիսոփայութեան: Սա-կայն իբր բանաստեղծական ստեղծագոր-ծութիւն՝ տկար է եւ թոյլ, ըլլալով ա-ւելի պատմութեան մը, ոգեկոչում մը վար-դապետութեան, քան հոգեկան զգացողու-թեան մը դունաղեղ արտայայտութիւնը: Քիչ են նաեւ պատկերները, եւ բացատրու-թեանց հակադրական ոյժը նուազ. դեղե-ցիկ է միայն առաջին տան թաղծութեան ստուերին պատկերացումը գիշերային խոր լուծեան մէջ.

«Նըսեմաստուեր ի խըցիկիս

չիք այլ ոք,

Բայց յըստութեան, բայց յըստութեան
թաղծութեան»:

Գեղեցիկ է նաեւ վերջին տան կապը առա-ջին եւ երկրորդ տուններուն, իբրեւ օղակին երկու ծայրերը, որոնց մէջ միջանկեալ պատմական եւ կամ նկարագրական բնոյթ կրող տուններ չգլխաւորած, միացած են իրարու հետ կազմելով ամբողջութիւն մը: Խորհրդածութեան ու արուեստի դործ մը անտարակոյս, աւելի դրական ձեւով, քան քնարական յուզականութեամբ, եւ կամ հոգեբանական նոպայի մը ժայթքումով:

* * *

Յաւի զգացողութիւնը արտառոց ար-տայայտութիւններու կը հասնի Մայր իմ եւ հայր իմ (Երկրագոյնում, 1885. 259) քերթուածին մէջ օրինակ՝ ուր կ'երգէ իր դժբախտ ծնունդը, տալով սա աղեխարշ տողերը վերջին մասին մէջ.

Ըզճակատուն քառորդ լուսին՝

նա զիս ըզգայգն յըզացաւ:

Ո՞վ է հայրն իմ, չըգիտե՛մ զայն.

թերեւս Աստուած, Դեւ կամ Յաւ.

Այլ ճանաչեմ ըզմայրն իմ որ

վաղ անցանի՛ր, որ անցաւ...:

— Մայրն իմ, այո՛, ինքն է Մայիս,

եւ անշուշտ հայրս՝ ինքն է Յաւ:

Գրուած է 31 Մայիսին ի Սիւստար, եւ ձօնուած առ Սրբուհի Տիւսար, յետ ըն-թերցման անոր վէպին, զոր նէ ձօնած էր մօրը մահուան յիշատակին. որուն ի պա-տասխան Եղիա կը ձօնէ իր այս բանա-ստեղծութիւնը:

Խորտակիչ տրտմութիւնը կը հասցնէ Եղիան նաեւ ցնորքի: Մեղամաղձութեան ու սաստիկ տխրութեան հոգեվիճակ մը չէ պարզապէս անորը, այլ հիւանդաղին տը-րորում, առողջ երեւակայութեան եւ ու-

